„Շուշեցի հայը“, որ բաւական բնորոշ և գեղեցիկ գործ է։ Բայց որքա՜ն տչխատանք է հարկաւոր պարոնին, որ վերջ ի վերջոյ իւր համար ճանապարհ հարթի։ ԳՆՂԱՍԷՐ

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴՐ. ՄՕՐՏՕՆԻ ՓՈՐՁԵՐԸ։ Ամերիկական թերթերը հաղորդում են Դր. Մորտոնի կատարած փորձերի մասին բաղի—ակտիւի վերաբերութեամբ։ Մարտոնը յայտնում է, որ բաղին գործ դնելով ինչպէս բժշկական միջոց, բժշկել է խլիրդի (ракъ) երկաք դէպք, և այժմ երկու նման հիւանդներ էլ բժշկուելու վերայ են։

Նորա ասելով, բժշկութեան ոյժը նորա մէջն է, որ բաղին դեղերին տալիս է լուսի ճառագայթներ, որոնք իբրև հեղուկ լոյս թափանցում են զարկերակների մէջ։ Բաղին և X-ճառագայթները կարող են խլիրդը բժշկել, մինչև որ սա չէ բացուել։ Երբ լուսի ճառագայթները թափանցում են ամբողջ արիւնային համակարգութեան մէջ, այդ լոյսի տպաւորութիւնը սկսում է ներգործել հիւանդ տեղերի վերայ։ Ստամոքսի մէջ զգուշութեամբ կարելի է ներս տանել բաղիով մի փոքր անօթ, որ և կներգործէ շրջապատող միջավայրի վերայ։ Հիւանդին կարելի է տալ լուսի ճառագայթներ պարունակող ջրից փոքր ինչ, բայց մեծ զգուշութեամբ, որովհետև խիստ ներգործող միջոցներից է այն։

Խլիրդը բժշկելիս Մորտոնը առաջ տալիս է քինա կամ ուրիշ դեղ, որ ընդունակ է ճառագայթների ազդեցութեամբ ներընդունել ճառագայթները։ Եւ այնուհետև հիւանդներին ենթարկում է բաղիի կամ X-ճառագայթների ազդեցութեան։ Նա յայտնում է որ երևելի հետևանքների է հասել ճահճատենդը, լուպուսը, տուբերկուլեոզը և այն բոլոր հիւանդութիւնները բժշկելիս, երբ հարկաւոր էր վնասուած հիւսուածները փոխարինել նոր, թարմ հիւսուածներով, որոնք ընդունակ լինին դիմադրել մանրէների զարգացման։

Դր. Մորտոնը համոզուած է, որ լոյսը ներմուծելով արեան մէջ և յետոյ փոխարինելով բաղիով՝ կարելի է բժշկել թոքախտը։ Բաղին և X-ճառագայթները կազմակերպում են նոր հիւսուածներ։ Բայց զգուշութեամբ պէտք է գործադրել, որովհետև նա, շատ խիստ չափով՝ առողջացնելու փոխարէն կարող է սպանել։

ԷԴԻՍՍՕՆԻ ՆՈՐ ԳԻՒՏԸ։ Էդիսսոնը շուտով կծանուցանէ իւր նոր գիւտի մասին, որով հեռախօսի միջոցով խօսողը կը տեսնէ միևնոյն ժամանակ և այն անձի դէմքը, որ խօսում է նորա հետ։ Այս գործի վերայ Էդիսսոնը աշխատում է 1889 թուից սկսած։

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ։ Իտալացի ճարտարապետ

Պիսիչելլին գտել է նամակները փոխադրելու նոր եղանակ։ Նամակները ուղարկում են փոքրիկ վագոնետներով, որոնք շարժողության են ենթարկվում էլեքտրականությամբ հեռագրական թելերի վերայով։ Լոնդոնում կազմակերպուել է մի ընկերություն այս գիւտը շահագործելու համար։ Այս եղանակով առաջին անգամ նամակներ ուղարկուելու փորձերը կատարուել են Հռոմի և Նեապոլի միջև։ (Ֆ. օб.)

ՇԻՀՈՒԿ ՑՈԴԱՔԱՄՈՒ ԴԷՄ։ Գերմանացի դր. Մէնցէրը կարծէք վճռել է յոդաքամու հաստատապէս բժշկութեան մեծ խնդիրը։ Համոզուած լինելով, որ այս հիւանդութիւնը առաջ է գալիս յոդերում մի առանձին մանրէից, նա այս մանրէներից շիճուկ պատրաստեց։ Յետոյ նա իւր շիճուկը փորձեց յոդաքամիով 7 հիւանդների վերայ, որոնց մէջ կային և ծանր հիւանդներ, սրտի հիւանդութեան բարդութիւններով, որոնք չէին բժշկուում սովորական եղանակով։ Սրսկելուց յետոյ հիւանդ յոդերում առաջ է գալիս սաստիկ կարմրութիւն, ուռոյց և ցաւ, ջերմը աւելանում է, նշիկները կարմրում են, առաջանում է գլխի ցաւ, իսկ մարմնի վերայ երբեմն երևում են նոյն իսկ բծեր, բայց այս ամենը միայն կարճ ժամանակ, իսկ 8—14 օրից յետոյ յոդաքամին անցնում է անհետ։ Առողջացածների թուում կար ի միջի այլոց մի 25 տարեկան կին, որ 8 ամիս շարունակ բժշկուում էր հանգուցաւոր յոդաքամուց և ձեռները ծալել չէր կարողանում։ Սրսկելուց ծալելու շարժումները վերականգնեցան 2—3 օրից։ Նոյնպիսի հետևանք է ստացուել և ծնկան անշարժութիւն ունեցող յոդաքամոտի բժշկութեան դէպքում։ («С. П. Б.»)։

ՕՐ. ՆՈՒՍԱՐԴ ԱՂԱՆԵԱՆ